ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 հուլիսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

95
(2945)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ ՔԱՅԼԵՐ ԵՆ ԱՐՎՈՒՄ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՄԱՐ

«Ժողովուրդ» օրաթերթն օրերս հարցումով դիմել էր ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանին՝ հետեւյալ հարցադրումներով. «Բաքվի բանտում ապօրինի պահվող Ռուբեն Վարդանյանի իրավաբանական թիմը հունիսի 13-ին ծավալուն դիմում է ներկայացրել խոշտանգումների հարցով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողին՝ներկայացնելով խոշտանգման սարսափելի փաստեր: Վստահաբար, որեւէ կասկած չկա, որ խոշտանգումներ են կիրառվում նաեւ մյուս հայ բանտարկյալների նկատմամբ: Ձեր կողմից այսօր ՀՀ քաղաքացիների խոշտանգումների մասով թույլ եւ ընդհանրական արձագանք եղավ (դիմումից 12 օր անց):

1. Արդյո՞ք Ձեր արձագանքի ուշացումը պայմանավորված է արցախցի գործիչների հասցեին վարչապետ Նիկոլ Փաշինյանի (մասնավորապես՝ «ԼՂ-ի կղերաֆեոդալական էլիտայի» մասին հայտարարությունը), իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության որոշ ներկայացուցիչների, ինչպես նաեւ իշխանամերձ փորձագետների (օրինակ՝ Դանիել Իոաննիսյանի գնահատականները) հայտարարություններով: Եթե ոչ, ինչո՞վ կբացատրեք այդ համընկնումները:

2. Բացի ընդհանրական գնահատականից՝ առ այն, որ «այդ հանգամանքն անընդունելի է եւ միջազգային հանրության կողմից պետք է արժանանա պատշաճ գնահատականի», նախատեսո՞ւմ եք արդյոք ՄԻՊ-ի ինստիտուտի գործիքակազմով քայլեր ձեռնարկել Բաքվի բանտում՝ ՀՀ քաղաքացիների խոշտանգումների հարցի հետ կապված: Խնդրում ենք մանրամասնել, թե ե՞րբ եւ հստակ ի՞նչ քայլեր եք նախատեսում ձեռնարկել»:

ՄԻՊ Անահիտ Մանասյանի գրասենյակից ստացանք հետեւյալ պատասխանը. «Ի պատասխան ձեր հարցման՝ հայտնում ենք հետեւյալը. Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետեւում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում՝ նաեւ կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների եւ ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

Այս համատեքստում ցանկանում ենք ընդգծել, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն ունի միջազգայնորեն հաստատված անկախության ամենաբարձր՝ «A» կարգավիճակը: Մարդու իրավունքների պաշտպանն իր մանդատի սահմաններում որեւէ խնդրի վերաբերյալ բարձրաձայնելուց կաշկանդված չէ:

Ի պատասխան Ձեր հարցի՝ տեղեկացնում ենք, որ ներկայացված խնդիրը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի մանդատի շրջանակներում չէ: Միեւնույն ժամանակ, ՄԻՊ Անահիտ Մանասյանը միջազգային գործընկերների հետ հանդիպումների եւ այլ ձեւաչափով հաղորդակցության շրջանակում մշտապես է բարձրաձայնում ինչպես Ռուբեն Վարդանյանի, այդպես էլ Ադրբեջանի կողմից ազատությունից զրկված մյուս էթնիկ հայերի հիմնարար իրավունքներին առնչվող հարցեր:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը երեկ հերթական անգամ տապալեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների ընտրությունը: Ինչպես ավելի վաղ հայտնել էինք՝ ԿԿՀ անդամի պաշտոնի համար առաջադրվել էին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վարչության նախկին պետ Նարինե Ավետիսյանն եւ արցախցի իրավաբան, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի նախկին փորձագետներից Վաղարշ Աղաբեկյանը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ-ականները հիմնականում դրական տրամադրվածություն են ունեցել Նարինե Ավետիսյանի նկատմամբ ու կողմ են եղել նրա թեկնածությանը, իսկ Վաղարշ Աղաբեկյանն ի սկզբանե ՔՊ-ականների «սրտով» չի եղել: Երեկ՝ ԿԿՀ անդամի ընտրության քվեարկությունից առաջ, ՔՊ-ն ֆրակցիայի փակ նիստ է արել եւ, ի վերջո, թեկնածուներից ոչ մեկը բավարար ձայներ չհավաքեց: Հավանաբար, իշխանականները փնտրում են իրենց «սրտի» թեկնածուին, ով անմնացորդ լոյալություն կցուցաբերի եւ աչք կփակի իրենց կոռուպցիոն սկանդալների վրա, բայց ընդդիմադիրների հայտարարագրերը կստուգվեն ամենայն մանրամասնությամբ:

ՔՊ-ական պատգամավոր Սոնա Ղազարյանը կուսակցական լրատվամիջոցին տված հարցազրույցում հայտարարել է, թե ՌԴ-ն «փուլ առ փուլ» դուրս է գալիս Հայաստանից: Մանիպուլյացիաների ու ստերի տարածումը ՔՊ-ականների համար վաղուց սովորություն է դարձել: Այդ շարքից է նաեւ պատգամավորուհու՝ հարցազրույցում արած պնդումը: Միայն թե, արժեր Սոնա Ղազարյանին հիշեցնել, օրինակ, Փաշինյան-Պուտին վերջին հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունը, թե ռուս սահմանապահները դուրս կգան Հայաստանի մի շարք մարզերից, բայց կմնան հայ-թուրքական եւ հայ-իրանական սահմանին: Ընդ որում, շատ կարեւոր է հայ-իրանական սահմանին ռուս սահմանապահների ներկայությունը, քանի որ, եթե Թուրքիայի հետ ունենք չկարգավորված հարաբերություններ ու ռազմական ագրեսիայի վտանգ, ապա հայ-իրանական սահմանին այդ վտանգն առկա չէ: Հիմա ՌԴ-ի՝ իբր Հայաստանից «փուլ առ փուլ» դուրս գալու մեկ այլ օրինակ. Վիճակագրական կոմիտեն հրապարակել է այս տարվա հունվար-մայիս ամիսների արտաքին առեւտրաշրջանառության ցուցանիշները: Եվ ահա, այս ընթացքում ՌԴ-ի հետ Հայաստանի առեւտրաշրջանառությունը կազմել է ընդհանուր առեւտրի 45.9 տոկոսը, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում 36.1 տոկոս էր: 16.3 մլրդ դոլար առեւտրից 7.5 մլրդ դոլարը բաժին է հասնում ՌԴ-ին: Ընդ որում, ավելի քան 5 անգամ աճել է Ռուսաստանից ներկրումների ցուցանիշը: Էլ չենք ասում, որ Հայաստանի համար առանցքային կարեւորություն ունեցող ոլորտները՝ էլեկտրաէներգիա, գազ, երկաթուղի եւ այլն ռուսական ընկերություններինն են:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Հունիսի 12-ին՝ ԱԺ-ում Կառավարության հարցուպատասխանի ժամանակ, լրագրողներին բռնությամբ ԱԺ օթյակից դուրս հանելու միջադեպով՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով վարույթ է նախաձեռնվել: Նշենք, որ «Իրազեկ քաղաքացիներ միավորում» ՀԿ համակարգող Դանիել Իոաննիսյանը հաղորդում էր ներկայացրել այն մասին, որ 2024թ. հունիսի 12-ին հրապարակվել է՝ «Պատգամավորները քաշքշում են միմյանց, ընդմիջման ժամանակ կրքերը չեն հանդարտվում» վերտառությամբ տեսանյութ, որը, ենթադրաբար, նկարահանված է լրագրողների կողմից՝ ԱԺ նիստերի դահլիճի օթյակից (օթյակը նախատեսված է նիստը լսելու եւ ցանկության դեպքում նաեւ նկարահանելու համար): Տեսանյութի 4-րդ րոպեի 45-րդ վայրկյանից լսվում է, թե ինչպես են լրագրողներին դուրս հրավիրում օթյակից, մինչդեռ ԱԺ նիստը տեղի էր ունենում բաց ընթացակարգով, այսինքն՝ այն կարող էր ձայնագրվել, տեսանկարահանվել, լուսանկարահանվել, ուղիղ հեռարձակվել: Անհայտ անձը (ամենայն հավանականությամբ՝ ԱԺ անվտանգության աշխատակիցներից որեւէ մեկը) ստիպում է լրագրողներին դուրս գալ օթյակից, ինչով նա խոչընդոտում է լրագրողների մասնագիտական գործունեությունը: «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողները եւս այդ պահին գտնվել են օթյակում եւ արձանագրել են, որ ՊՊԾ աշխատակիցներին այդ հրահանգը անձամբ տվել է ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը եւ անձամբ օթյակի միջանցքում հետեւել է, թե ինչպես են լրագրողներին բռնությամբ դուրս հանում օթյակից: Հուսանք՝ քննչական ծառայությունները ԱԺ աշխատակազմի ենթադրյալ ինքնիրավչության վրա աչք չեն փակի, եւ Առաքելյանը օրենսգրքի ողջ խստությամբ կպատժվի՝ լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու համար:

ԶՐՈՒՅՑ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՈՒԺԻ ՍՊԱՌՆԱԼԻՔ Է ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ArmLur.am-ը զրուցել է պատմական գիտությունների թեկնածու, ադրբեջանագետ Տաթեւիկ Հայրապետյանի հետ:

-Տիկին Հայրապետյան, նախ անդրադառնանք Վաշինգտոնում, Բլինկենի միջնորդությամբ՝ Փաշինյանի եւ Ալիեւի միջեւ կայացած հանդիպմանը: Անմիջապես հանդիպումից հետո Արարատ Միրզոյանը գրառում էր արել այն մասին, որ պետք է սեղմ ժամկետում խաղաղության պայմանագրի ստորագրման գնալ: Այնուհետեւ Բլինքենը հայտարարեց, որ երկար ժամանակ չի մնացել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրմանը, արդեն կնքում են այն: Դուք այս հայտարարությունները իրատեսական համարո՞ւմ եք: Հնարավո՞ր է, որ առաջիկայում պայմանագիր կնքվի՝ հաշվի առնելով, որ Ադրբեջանը գնալով նոր պահանջներ է առաջ քաշում. ասում է, որ մինչեւ ձեր Սահմանադրությունը չփոխեք, չի լինելու խաղաղության պայմանագիր:

-Կարծում եմ, որ ո՛չ: Խաղաղության պայմանագիր չի ստորագրվելու, ինչը հոյակապ գիտակցում են թե՛ Վաշինգտոնում, թե՛ Երեւանում, սակայն, ընդհանուր առմամբ, փորձում են կենդանի պահել գործընթացը: Առհասարակ Ադրբեջանը, նույն Ալիեւի խոսնակները, պատգամավորները եւ այլք, նշում են, որ Վաշինգտոնը որեւէ դերակատարում չի կարող ունենալ գործընթացում, որ գործընթացը երկկողմ է, որ պայմանները թելադրում են իրենք:

Դա այն տրամաբանությամբ, երբ Ադրբեջանը վերջին կես տարվա ընթացքում մոտ վաթսուն վարժանք ու զորավարժություն է անցկացրել՝ անհատական, համատեղ եւ այլն, ցույց է տալիս, որ այդ պետությունը չի գնում խաղաղության հաստատման ճանապարհով: Ասեմ ավելին՝ հենց նույն Օ՛ Բրայենի այցից հետո Ադրբեջանը փաստացի ռազմաքաղաքական եւ ռազմավարական համագործակցության հռչակագիր ստորագրեց Ադրբեջանի հետ եւ պատրաստվում է միանալ BRICS-ին: Այսինքն՝ հստակորեն ցույց տվեց իր քաղաքական դիրքորոշումը, որը չի փոխվելու: Իրականության մեջ ես լավատեսության ոչ մի նշան չեմ տեսնում:

-Տիկին Հայրապետյան, ըստ Ձեզ, հնարավո՞ր է իրավիճակն այնպես դասավորվի, որ Ադրբեջանը գնա ռազմական գործողությունների՝ սահմանին՝ հաշվի առնելով այն փաստը, որ Ադրբեջանը ստանում է այն ամենն ինչը պահանջում է Հայաստանից:

-Եթե ինչ պահանջում է ստանում է, ապա, լավագույն դեպքում, կկիրառի ուժի սպառնալիքը, ոչ թե բուն ուժը: Իսկ եթե պարզապես սպառնալիք է հնչեցնում, ինչպես Տավուշում տեղի ունեցած դեպքերից առաջ, ապա այդ դեպքում սպառնալիքը հնչեցվեց, քարոզը շարունակվեց, Նիկոլ Փաշինյանը այդ սպառնալիքը վերցրեց բերեց այստեղ: Ադրբեջանը Հայաստանի Հանրապետության ղեկավարությանն օգտագործում է հայ ժողովրդի դեմ՝ բանակցային գործընթացում: Սա է ողջ տրամաբանությունը: Չեմ բացառում, որ նույն տրամաբանությունը կգործի նաեւ Սահմանադրության դեպքում: Այսինքն՝ կլինեն սպառնալիքներ, Նիկոլ Փաշինյանը կասի «Ուզո՞ւմ եք պատերազմ լինի, եթե չէ, ապա գնացե՛ք, քվեարկե՛ք», իսկ եթե գործողություններ լինեն, կասի՝ «դուք եք մեղավոր, որ մեր երկրի դեմ գործողություններ են գնում»: Անհեթեթ տրամաբանություն է, բայց այն աշխատում է որոշ շրջանակների դեպքում:

-Սահմանադրության օրվա առթիվ իր ուղերձում էլ Նիկոլ Փաշինյանը հստակ հայտարարեց, որ մեզ նոր Սահմանադրություն է պետք: Այսինքն՝ հստակ հայտարարեց, որ կատարելու է այս պահանջը:

-Դե, ըստ էության, բոլոր պահանջներն էլ կատարել է մինչեւ հիմա: Պատմական եւ իրական Հայաստանների մասին թեզն է անգամ գեներացվել: Նիկոլ Փաշինյանի եւ Իլհամ Ալիեւի թեզերը նույնն են, անգամ բառ առ բառ են կրկնվում, նույնիսկ հոմանիշներ չեն ընտրվում: Ես վստահ եմ, որ այդ թեզերը Բաքվում են գեներացվում եւ հրամցվում են իրեն:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԿՀԱՆՁՆՎԻ 23 ՄԼՆ 671 ՀԶ. ԱՐԺՈՂՈՒԹՅԱՄԲ ԳՈՒՅՔ

ՀՀ կառավարության նիստերի օրակարգից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ առաջարկվում է, որպես նվիրատվություն ՀՀ-ին, ընդունել կառուցապա-տողներ Արսեն Առուշանյանին, Միքայել Միքայելյանին եւ Կարապետ Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երեւան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների փողոց 28/3 հասցեի գույքը՝ 507.0 հազար դրամ ընդհանուր շուկայական արժեքով նշված գույքն ամրացնել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին եւ վարձակալության հանձնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին: Հաջորդ կառույցը Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գ. Նժդեհի փողոց 23/6 շենք, 27/1 հասցեի 9.4 քառ. մետր մակերեսով պոմպակայանն է եւ պոմպակայանի սարքավորումները՝ 4414000 դրամ շուկայական արժեքով՝ համաձայն հավելվածի:

Երրորդ գույքը Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ա. Չեխովի փողոց, 47 շենք, 3-րդ մ/շ, 140 հասցեի պոմպակայանը՝ 16.1 քառ. մետր մակերեսով, եւ պոմպակայանի սարքավորումներն են՝ 18750000 դրամ շուկայական արժեքով՝ համաձայն հավելվածի:

Այսօր կայացած կառավարության նիստում նմանատիպ 3 չզեկուցվող հարց կա:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին վարձակալությամբ հանձնված շինությունների շուկայական արժեքը կազմել է 507 հազար դրամ, 4 մլն 414 հազար դրամ եւ 18 մլն 750 հազար դրամ. ընդհանուր առմամբ՝ 23 մլն 671 հազար արժողությամբ:

Հարցը կառավարության չզեկուցվող հարցերի օրակարգում էր:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

Կառավարության երեկվահուլիսի 11-ի նիստում կայացված որոշմամբ «Հայոց պատմություն» առարկան այսուհետ կդասավանդվի «Հայաստանի պատմություն» անվամբ: ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը մանրամասնել է, որ ծրագրի բովանդակության մեջ հիմնականում շեշտադրվելու են պետականության վերականգնմանը, արժեւորմանը եւ պահպանմանը վերաբերող փաստերը, պատմական իրողությունները, իրադարձությունները.

«Փոխվում է այդ իրադարձությունների եւ երեւույթների մեկնաբանման մեթոդաբանական սկզբունքը, որը դառնում է պետության հետագա գոյության, զարգացման տեսանկյունից պատմական իրողությունների վերարժեւորման դիտանկյուն: Մասնավորապես, օրինակ, այս կերպ կարող են նորովի վերագնահատվել պատմական բոլոր այն իրադարձությունները, երբ տեղի է ունեցել պետության կորուստ՝ սովորողների մոտ ձեւավորելով հնարավոր մարտահրավերների նկատմամբ ավելի վերլուծական, քննական հայացք, ինչպես նաեւ ամրապնդելով այն արժեքային կողմնորոշումը, որ պետությունը ժողովրդի եւ ազգի կազմակերպման բարձրագույն ձեւն է, ու դա պետք է ամրապնդել:

Սովորողները հնարավորություն են ստանում նորովի վերաիմաստավորել բոլոր այն ժամանակահատվածները, երբ պետությունը եւ պետական համակարգը չեն գործել: Սովորողը կկարողանա համեմատել ու համադրել այն մարտահրավերները, որն ունեցել է հայ ժողովուրդը պետության բացակայության պայմաններում»,- ասել է նա:

ՍԱՀՄԱՆԻՆ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինը ԵՄ քաղաքացիական առաքելության հետ դիտարկել է սահմանին տիրող իրավիճակը:

«Միացյալ Նահանգները ողջունում է տեւական եւ արժանապատիվ խաղաղության հաստատման ուղղությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի գրանցած առաջընթացը»,- նշում են ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունից:

ՆԱՏՕ–Ն ԱՋԱԿՑՈՒՄ Է

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի՝ Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում հատուկ ներկայացուցիչն անդրադարձել է Վաշինգտոնում Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի հետ հանդիպմանը:

Կոլոմինան «X»-ի իր միկրոբլոգում գրառում է կատարել՝ նշելով, որ Ջեյհուն Բայրամովի հետ քննարկել են ՆԱՏՕ-Ադրբեջան երկկողմ գործակցությունը եւ խաղաղության բանակցությունների զարգացումները:

«ՆԱՏՕ-ն վճռականորեն աջակցում է Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունների կարգավորմանը եւ երկարատեւ խաղաղության համաձայնագրի կնքմանը»,- նշել է Կոլոմինան:

ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Ռուսաստանի փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինը հայտնել է, որ Հայաստանի մասնակցությունը ՆԱՏՕ-ի գագաթնաժողովին ռուսական կողմում ծայրահեղ ափսոսանք է առաջացրել: Նրա խոսքով՝ Երեւանը հեռացել է խնդիրների քննարկման կառուցողական մոտեցումից:

«Խոսելով անվտանգության ոլորտի մասին՝ ուզում եմ ընդգծել, որ Հայաստանը շարունակում է մնալ ՀԱՊԿ անդամ, հանդես է գալիս որպես ռազմական եւ ռազմատեխնիկական ոլորտներում երկկողմ բազմաթիվ պայմանավորվածությունների մասնակից՝ Երեւանի ունեցած մտահոգությունները քննարկելու կառուցողական մոտեցման փոխարեն, ցավոք, այնտեղ այլ ճանապարհ են ընտրել»,- ասել է Միխայիլ Գալուզինը «ՌԻԱ Նովոստի»-ի հետ զրույցում:

Փոխարտգործնախարարը հավելել է, որ Հայաստանում նախընտրում են մեծացնել փոխգործակցությունը ՆԱՏՕ-ի կամ դաշինքի առանձին մասնակիցների հետ:

«Հայաստանը գերադասում է մեծացնել փոխգործակցությունը ՆԱՏՕ-ի կամ դաշինքի առանձին անդամների հետ, հատկապես ՆԱՏՕ-ի չափանիշների ներդրման, զենքի գնման կամ համատեղ մարտական պատրաստության աշխատանքներ իրականացնելու առումով, էլ չեմ խոսում այս օրերին Վաշինգտոնում կայանալիք այդ ռազմաքաղաքական դաշինքի գագաթնաժողովին մասնակցելու մասին»,- ասել է նա:

Գալուզինը դա որակել է «միաժամանակ երկու աթոռին նստելու» փորձ: Միխայիլ Գալուզինի խոսքով՝ Հայաստանի եւ ՆԱՏՕ-ի համագործակցության խորացումը կարող է ապակայունացնել իրավիճակը Հարավային Կովկասում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 49 ԱՎՏՈՄԵՔԵՆԱ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

ՀՀ կառավարությունը ավելի քան 1 մլրդ դրամով 49 մեքենա է ձեռք բերել «Ավանտգարդից», որոնց գերակշիռ մասը էլեկտրամոբիլներ են: Համապատասխան որոշումն ընդունվեց ՀՀ կառավարության այսօրվա նիստի ժամանակ:

Ավտոմեքենաների ձեռքբերման գնման ընթացակարգերի շրջանակներում ընտրված մասնակից է ճանաչվել «Ավանտգարդ» ՍՊԸ-ն: Ընկերության հետ պայմանագրերը կնքվել է այս տարվա հունիսի 27-ին:

Մեքենաները ձեռք բերելու համար ՀՀ կառավարության ներքո հաստատված միջոցներից 1 մլրդ 38 մլն 600 հազար դրամը կհատկացվի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

Մեքենաների մեջ ներառված են ներկայացուցչական 1 ամենագնաց, 6 էլեկտրական սպասարկող ամենագնաց, 39 էլեկտրական ծառայողական ամենագնաց, 3 ներկայացուցչական սեդան:

ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՄԵԿՆԱՐԿ

Երեկ մեկնարկել է ԱԺ արտահերթ նստաշրջանը:

Օրակարգում 13 հարց է եղել՝ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրինագիծը, որը հնարավորություն է տալիս Արցախի ԱԱԾ այն աշխատակիցներին, որոնք կընդունեն ՀՀ քաղաքացիություն, աշխատանքի անցնել Հայաստանի ԱԱԾ-ում: Օրակարգում լինելու է «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին աղմկահարույց օրենքի նախագիծը, որով Հայաստանում կթույլատրվի հղիության ընդհատումը դեղորայքով՝ ամբուլատոր կամ հիվանդանոցային պայմաններում, սեռաբջիջը կարող են նվիրատվություն կատարել, արտահանել, ներմուծել, իսկ սուրոգատ կնոջ համար նախատեսված տարիքը կբարձրացվի:

Խորհրդարանը արտահերթ նստաշրջանին նաեւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ կընտրի. թեկնածուները երկուսն են՝ Վաղարշ Աղաբեկյանը եւ Նարինե Ավետիսյանը:

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը շնորհակալություն է հայտնել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենին՝ Վաշինգտոնում եռակողմ հանդիպում կազմակերպելու համար:

X-ի իր էջում գրառմամբ Միրզոյանը վերահաստատել է Հայաստանի քաղաքական կամքը՝ հնարավորինս շուտ ավարտելու եւ կնքելու խաղաղության պայմանագիր Ադրբեջանի հետ՝ նպատակ ունենալով հաստատել կայուն խաղաղություն եւ կայունություն Հարավային Կովկասում:

ՀԱՐԱՔՉԱՏՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ

ՄԵՐՁԱՎՈՐՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼԻՆԵԼ

Արցախի Հանրապետությունում «մեկօրյա պատերազմի» ընթացքում անհետ կորած 21 անձանց հարազատները կարծում են, որ նրանք կարող են գտնվել ադրբեջանական գերության մեջ:

Խոսքը Արցախի դեմ 2023թ. սեպտեմբերի 19-20-ի ռազմական ագրեսիայի եւ դրան հաջորդած ժամանակահատվածում ողջ հայ բնակչության վտարման մասին է: Այդ ողբերգական օրերին Ստեփանակերտի մոտակայքում տեղի ունեցավ նաեւ բենզինի պահեստի պայթյուն՝ խլելով բազմաթիվ կյանքեր: Մինչեւ այժմ երկու տասնյակ մարդկանց մարմիններ չեն գտնվել եւ չեն նույնականացվել:

Զոհվածների եւ անհետ կորածների հարազաներն այսօր առավոտից բողոքի ակցիա են իրականացնում կառավարության շենքի առջեւ: Զոհվածների հարազատները պահանջում են իրականացնել ներկայում օկուպացված՝ Լեռնային Ղարաբաղում թաղվածների մնացորդների վերաթաղում Հայաստանի տարածքում: Անհետ կորածների հարազատները իշխանություններից պահանջում են զբաղվել իրենց հարազատների ճակատագրով:

Ակցիայի մասնակիցների խոսքով՝ տեղեկություն կա, որ բենզինի պահեստի պայթյունի տեղում աշխատել են ադրբեջանական ծառայությունների ներկայացուցիչները: Ինչպես հավաստիացնում են անհետ կորածների հարազատները՝ պայթյունի տեղում գտնված բջջային հեռախոսները եւ փաստաթղթերը չեն պատկանել անհետ կորածներին: Ավելին՝ հոկտեմբերին անհետ կորածներից մեկը զանգահարել է ընկերուհուն: Այս տեղեկությունը հանձնվել է ԱԱԾ, սակայն այդ ժամանակվանից ի վեր պաշտոնական աղբյուրներից հարազատները ոչ մի տեղեկություն չեն ստացել:

Նրանք կարծում են, որ իրենց մերձավորները կարող էին ողջ մնացած լինել եւ այժմ գտնվում են ադրբեջանական գերության մեջ: Մարդիկ չեն պատրաստվում հեռանալ՝ պահանջելով, որ իրենց մոտ գան կառավարության ներկայացուցիչները եւ տեղեկացնեն, թե ով է զբաղվելու այդ հարցով եւ ինչ է արվում:

Ակցիան շարունակվել է ավելի քան մեկ ժամ, սակայն ոչ ոք կառավարությունից չի բարեհաճել գոնե իջնել վշտից կորացած մարդկանց մոտ:

Նշենք, որ երեկ պատերազմի ժամանակ զոհվածների եւ անհետ կորածների հարազատները հավաքվել են կառավարության շենքի դիմաց՝ պահանջելով ներկայիս իշխանությանը գտնել իրենց հարազատներին, զբաղվել որոնման հարցերով:

Ակցիայի մասնակիցները պատրաստվում են այնքան մնալ կառավարության շենքի դիմաց, մինչեւ իրենց որեւէ մեկը կառավարությունից մոտենա եւ արձագանքի:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅ-ԲԵԼԳԻԱԿԱՆ ԿԱՊԵՐ ⇨

Ինչպես միշտ հաճելի էր հանդիպել իմ գործընկեր Հաջա Լաբիբի հետ: Այդ մասին X-ի իր միկրոբլոգում գրել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

«Տեղի ունեցավ հետաքրքիր զրույց՝հայ-բելգիական կապերի եւ ԵՄ-ի հետ ՀՀ գործընկերության հետագա ամրապնդման ուղիների վերաբերյալ: Մենք գնահատում ենք այն, ինչին հասել ենք եւ ձգտում ենք ավելիին: Մտքեր փոխանակեցինք տարածաշրջանային հարցերի վերաբերյալ, տեղեկացրի ՀՀ եւ Ադրբեջանի միջեւ գործընթացի մասին»,- ասված է գրառման մեջ:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ Վաշինգտոնում ՆԱՏՕ-ի կազմավորման 75-ամյակին նվիրված գագաթնաժողովի շրջանակներում ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի նախաձեռնությամբ եւ մասնակցությամբ տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարար Ջեյհուն Բայրամովի հանդիպումը:

Կողմերը նշել են խաղաղության եւ միջպետական հարաբերությունների հաստատման վերաբերյալ պատմական պայմանագրի կնքման ուղղությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից գրանցված առաջընթացը եւ համաձայնել են շարունակել աշխատանքները:

Էնթոնի Բլինքենը հանդիպմանը նշել է, որ Բաքուն եւ Երեւանը մոտ են խաղաղության պայմանագրի կնքմանը:

Հանդիպումից հետո ՀՀ ԱԳ նախարարը եւս գրառում էր կատարել՝ վերահաստատելով Հայաստանի քաղաքական կամքը՝ հնարավորինս շուտ ավարտելու եւ կնքելու խաղաղության պայմանագիրը Ադրբեջանի հետ:

ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՐՑՈՎ

Մինչեւ դիվանագետները հանդիպում են Վաշինգտոնում՝ ԱՄՆ միջնորդությամբ հայ-ադրբեջանական բանակցությունների համար, հայ բանտարկյալները հյուծվում են ադրբեջանական բանտերում. սա ակնհայտ կերպով հակասում է խաղաղության ցանկացած հռետորաբանության: Այս մասին նշվում է Free Armenian Prisoners-ի ֆեյսբուքյան էջում:

«Մենք հորդորում ենք ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենին՝ հայ բանտարկյալների անհապաղ ազատ արձակման հարցն առաջնահերթություն դարձնել: Չի կարող իրական խաղաղություն լինել, քանի դեռ մարդիկ շարունակում են ապօրինի կալանավորված մնալ:

Մենք կոչ ենք անում ԱՄՆ Պետքարտուղարությանն ու ԵԱՀԿ-ում ԱՄՆ առաքելությանը՝ դիմել կոնկրետ գործողությունների, այլ ոչ միայն խոսել: Տեւական խաղաղությունը կարող է կառուցվել միմիայն արդարության եւ մարդու իրավունքների հարգանքի հիման վրա»,-նշվում է հայտարարության մեջ:

Հիշեցնենք, որ անցած ամիս Բաքվում ապօրինի պահվող Ռուբեն Վարդանյանի միջազգային իրավաբանական թիմը հրատապ դիմում էր ներկայացրել ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի հատուկ զեկուցողին՝ հայտնելով նրա նկատմամբ իրականացված խոշտանգումների մասին:

Անցած շաբաթ հայտարարությամբ էր հանդես եկել նաեւ ԵԽԽՎ նախագահը՝ Ադրբեջանի իշխանություններին կոչ անելով անհապաղ վերականգնել Խոշտանգումների կանխման կոմիտեի հետ աշխատանքը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ՝ «ՏԵԼԵԳՐԱՄԻ» ՄԻՋՈՑՈՎ

ՀՀ ֆինչական կոմիտեի հատկատես կարեւոր գործերով ֆինության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիֆինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործություն-ների ֆինության վարչությունում ֆինչական խմբի կողմից իրականացված ֆինչական եւ վարութային համակարգված գործողությունների արդյունքում ղարզվել են թմրամիջոց արտադրելու, ղատրաստելու եւ իրացնելու, ինչպես նաեւ դրա արդյունքում ստացված ապօրինի եկամուտներն օրինականացնելու դեպքի՝ էական մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ մեխանիզմը: Այդ մասին հայտնում են ՀՀ ՔԿ-ից:

«Մասնավորապես՝ քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Երեւան քաղաքի բնակիչ, 37-ամյա տղամարդը 2020-2023 թվականների ընթացքում, քննությամբ ինքնությունը դեռեւս չպարզված այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, շահադիտական դրդումներով, առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվելու դիտավորությամբ, իրացնելու նպատակով, աճեցնելու եղանակով, ապօրինի արտադրել եւ պատրաստել է առանձնապես խոշոր չափերով «Պսիլոցիբին եւ (կամ) պսիլոցին պարունակող ցանկացած տեսակի սնկերի զանգված» տեսակի թմրամիջոց, ապահովել դրա առանձնացումն ըստ քաշերի, փաթեթավորումը, նախապես տեղադրումը թաքստոցներում, դրանց գտնվելու վայրերի լուսանկարահանումը, ծրագրային հավելվածի միջոցով նշվել են դրանց գտնվելու վայրերի աշխարհագրական կոորդինատները: «Telegram» հեռահաղորդակցման հավելվածում գրանցված առցանց խանութ-հարթակների միջոցով դրանք փոխանցվել են թմրամիջոց ձեռք բերելու ցանկություն հայտնած եւ հանցակիցների կողմից փաստացի կառավարվող կրիպտոարժութային դրամապանակներին համապատասխան չափով միջոցներ փոխանցած անձանց՝ այդ կերպ իրականացնելով հիշյալ թմրամիջոցի իրացումը:

Նախաքննության ընթացքում ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումների արդյունքում՝ արտադրված եւ պատրաստված թմրամիջոցի մի մասը՝ առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 40,09 գրամ հաստատուն չոր քաշով «Պսիլոցիբին եւ (կամ) պսիլոցին պարունակող ցանկացած տեսակի սնկերի զանգված» տեսակի թմրամիջոցը, 37-ամյա տղամարդն ապօրինի պահել է իր բնակարանում, որոնք հայտնաբերվել եւ վերցվել են խուզարկությամբ: Քննությամբ փաստական տվյալներ են ստացվել նաեւ այն մասին, որ թմրամիջոցների իրացումից ստացված ֆինանսական միջոցների հանցավոր ծագումը, տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, դրանց օրինական տեսք հաղորդելու նպատակով 37-ամյա տղամարդը, հանցակիցների հետ նախնական համաձայնությամբ, թմրամիջոցներ ձեռք բերելու ցանկություն հայտնած անձանց տրամադրել է, գումարի փոխանցման նպատակով, պարբերաբար փոփոխվող բազմաթիվ կրիպտոարժութային դրամապանակների տվյալներ: Դրանից հետո թմրամիջոցների գնորդները այդ էլեկտրոնային դրամապանակներին կատարել են համապատասխան չափով դրամային փոխանցումներ եւ, փոխանցման անդորրագրերն ուղարկելով նշված առցանց խանութ-հարթակներին, ապօրինի ձեռք բերել պատվիրված թմրամիջոցը: Ստացված կրիպտոարժույթը փոխանցվել է ՀՀ տարածքում կրիպտոարժույթի փոխանակմամբ զբաղվող անձանց կողմից շահագործվող կրիպտոարժութային դրամապանակներին:

Պարզվել է, որ միայն 37-ամյա տղամարդու անվամբ «Բինանս» համակարգում նույնականացված կրիպտոարժութային դրամապանակներին, նկարագրված եղանակով, 2022-2023 թվականների ընթացքում փոխանցվել, ապա «Իդրամ» վճարահաշվարկային համակարգում նույնականացված դրամապանակին փոխանցվել եւ 37-ամյա տղամարդու կողմից տնօրինվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված խոշոր չափերով՝ ընդհանուր 8.348.549 ՀՀ դրամ գումար: Այդ կերպ իրականացվել է փողերի լվացում:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա Երեւան քաղաքի 37-ամյա բնակչին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 404-րդ հոդվածի 1-ին մասով եւ 296-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով: Որպես խափանման միջոց նրա նկատմամբ կիրառվել է բացակայելու արգելքը:

Վերջինիս մասով հայտարարվել է նախաքննության ավարտի մասի եւ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկողություն իրականացնող դատախազին:

Թմրամիջոցների իրացման, փողերի լվացման հանցավոր շղթայում ներգրավված մյուս անձանց մասով նախաքննությունը շարունակվում է»,- նշված է հաղորդագրությունում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՆՆՉԱԿԱՆ

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ՍԻՍԻԱՆԻ ՋՈՐԱՄԱՍՈՒՄ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Սիսիանի ՌՈ բաժնից ստացված հաղորդման առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնում 2024 թ. հուլիսի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ եւ 9-րդ կետերի, 297-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 468-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացված անհետաձգելի քննչական եւ վարութային այլ անհրաժեշտ գործողությունների ընթացքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ 2024 թ. հուլիսի 7-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, անտեսելով վերակարգի արգելքը, հսկիչ-անցագրային կետի հերթապահի եւ գնդի հերթապահի պահանջներին հակառակ՝ մի խումբ քաղաքացիական անձինք ապօրինի մուտք են գործել ՀՀ ՊՆ N զորամասի տարածք՝ զորամասում ծառայող իրենց մտերիմ ժամկետային զինծառայողին վերաբերող ծառայողական բնույթի հարցի պարզաբանման նպատակով: Այդ մասին հայտնում են ՀՀ ՔԿ-ից:

«Զորամասի հերթապահի պահանջով զորամասի տարածքից դուրս գալուց հետո՝ անմիջապես դարպասների դիմաց նույն հարցի կապակցությամբ նրանք վիճաբանել են իրենց ծառայողական գործունեությունը կատարող, զորամասի գումարտակի սպայի եւ պայմանագրային մեկ զինծառայողի հետ, որի ընթացքում, միմյանց փոխլրացնելով, համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, խոչընդոտելով զորամասի՝ տվյալ ժամանակ օրվա կարգացուցակով նախատեսված բնականոն աշխատանքը, հարվածներ հասցնելով՝ բռնություն են գործադրել հիշյալ զինծառայողների նկատմամբ՝ վերջիններիս պատճառելով տարբեր մարմնական վնասվածքներ: Միաժամանակ քաղաքացիական անձանցից մեկը գազային ատրճանակով կրակոց է արձակել դեպի օդ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա նկարագրված հանցավոր արարքները կատարելու համար Սիսիան քաղաքի բնակիչ հանդիսացող 3 անձի մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ մասով, 195-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 5-րդ կետերով ու 297-րդ հոդվածի 3-րդ մասով:

Քննիչի կողմից միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու վերաբերյալ, որոնք բավարարվել են:

ԼՈՒՐԵՐ

ԱՇՈՏՅԱՆԻ ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ ԵՎՍ 3 ԱՄՍՈՎ

ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանի կալանքը երկարաձգվեց եւս 3 ամիս ժամկետով: Նիստը նախագահող դատավորը խափանման միջոցը թողեց անփոփոխ:

Դատարանը մերժեց պաշտպանների առաջարկները՝ տնային կալանք, 40 մլն դրամ գրավ եւ երաշխավորությունները: Նշենք, որ Աշոտյանի համար երաշխավորել էին ՀՀ նախկին վարչապետ Խոսրով Հարությունյանը եւ ԱԺ նախկին նախագահ Տիգրան Թորոսյանը:

Հիշեցնենք՝ Արմեն Աշոտյանը կալանավորվել է 2023 թ. հունիսի 16-ին: Նա եւ Երեւանի Հերացու անվան բժշկական համալսարանի նախկին ռեկտոր Միքայել Նարիմանյանը մեղադրվում են բուհին պատկանող մոտ 100 հազար դոլարի գույք հափշտակելու մեջ: Նրանց մեղադրում են «Ծովասար» հյուրանոցային համալիրի քոթեջները ուռճացված գներով (հաջորդած՝ «ատկատներով») ձեռք բերելու համար այն ժամանակահատվածում, երբ ՀՀԿ փոխնախագահը գլխավորել է բուհի հոգաբարձուների խորհուրդը:

ՄԱՀԱՑԵԼ ԵՆ ՎԹԱՐԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին երեկ հայտնի դարձավ, որ զինվորներ են բանակից զորացրվել ու տաքսի ծառայության մեքենայով ուղեւորվել են տուն:

Սիսիանի ճանապարհին մեքենան վթարի է ենթարկվել ու զորացրված զինվորներից մեկը եւ վարորդը, ըստ նախնական վարկածի, մահացել են:

ՔԿ նախագահի մամուլի խոսնակ Գոռ Աբրահամյանը գրել էր. «Հուլիսի 11-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, Երեւան-Մեղրի ճանապարհի 175 կմ հատվածում՝ Գորայք բնակավայրի մոտ, վթարի է ենթարկվել «Միցուբիշի Գրանդիս» մակնիշի քաղաքացիական ավտոմեքենա, ինչի հետեւանքով տեղում մահացել են երկու անձ, իսկ 5-ը տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են բուժհաստատություններ:

Նախնական տվյալներով՝ զորացրված զինծառայողները տաքսի ավտոմեքենայով ուղեւորվելիս են եղել Երեւան քաղաքի ուղղությամբ:

Մահացածներից մեկը վարորդն է, մյուսը՝ ուղեւորներից մեկը: Նախնական տվյալներով՝ բուժհաստատություն դիմած անձանցից 2-ի վիճակը ծանր է, երկուսինը՝ միջին ծանրության, մեկինը՝ բավարար:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի քննչական վարչության Սիսիանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով:

Քննիչները դեպքի վայրում են, իրականացնում են անհրաժեշտ եւ անհետաձգելի քննչական գործողություններ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հուլիսի 10-ից հուլիսի 11-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 99 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԸ՝ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ

Ճանապարհային դեպարտամենտից հայտնում են՝ շինարարական աշխատանքներով պայմանավորված՝ հուլիսի 10-ից երթեւեկության համար ժամանակավորապես կփակվի Հ-58 հանրապետական նշանակության ճանապարհի Կիրանց գյուղով անցնող հատվածը: Տվյալ հատվածը վարորդները կարող են շրջանցել Հ-58-Աճարկուտ-Հ-58 ավտոճանապարհով: Կտրվի լրացուցիչ տեղեկություն: Ինչո՞ւ է «ժամանակավորապես» փակվել Կիրանց գյուղով անցնող հատվածը. այն միշտ էլ փակ է լինելու, քանզի տարածքը հանձնվել է Ադրբեջանին: Կիրանց գյուղի տարածքները, միջպետական ավտոճանապարհի Կիրանցի կամուրջը, Ադրբեջանին հանձնելուց հետո, Մ4 միջպետական ավտոճանապարհը դարձրել են Հ-58 հանրապետական նշանակության ճանապարհ:

ԿԻՐԱՆՑՈՒՄ ԿՍՏԵՂԾՎԻ՞ ՄԱՐԶԱԲԱԶԱ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հետեւյալ հարցն ենք ուղղել. «Մայիսի 29-ին Տավուշի մարզպետարանում տեղի ունեցած՝ Տավուշի գյուղատնտեսական զարգացման ծրագրի ղեկավար կոմիտեի նիստում, որին մասնակցել են Դուք, Ֆրանսիայի Օ-դը-Սեն դեպարտամենտի նախագահ Ժորժ Սիֆրեդին, Ֆրանսիայից ժամանած դեպարտամենտի խորհրդի անդամներ ու այլք, Տավուշի մարզի «Զբոսաշրջության զարգացման գործակալություն» ՀԿ-ի նախագահ Սոս Խաչիկյանը ներկայացրել է Կիրանց բնակավայրի տնտեսական զարգացման նախագիծը, ինչի շուրջ եղել է ակտիվ քննարկում: Ի՞նչ միջոցառումներ են նախատեսված Կիրանցի տնտեսական զարգացման նախագծով, որքա՞ն գումար է այդ նպատակով նախատեսված, ովքե՞ր են նախագծի դոնորները»: Մարզպետարանից պատասխանել են. «2024 թվականի մայիսի 29-ին ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմում Ֆրանսիայի Օ-դը-Սեն դեպարտամենտի ներկայացուցիչների հետ Տավուշի գյուղատնտեսական զարգացման ծրագրերի ղեկավար կոմիտեի նիստի ժամանակ Կիրանց բնակավայրի տնտեսական զարգացման նախագծի ներկայացումը եղել է «Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման գործակալություն» ՀԿ-ի նախաձեռնությամբ: Առաջարկվող նախագծով նախատեսվում է Կիրանց բնակավայրում կամ հարակից տարածքներում ստեղծել մարզաբազա եւ համայնքային բիզնես-ինկուբատոր, որը կնպաստի Կիրանցի եւ հարակից բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Նախագծի շրջանակներում «Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման գործակալություն» ՀԿ-ն պատրաստվում է աշխատանքներ իրականացնել միջազգային կազմակերպությունների եւ մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ՝ ծրագրային դրույթները կյանքի կոչելու համար»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՆՉՈՒ ԵՆ ԱՀԱՔԱՆԳՈՒՄ

ՌԵՍՏՈՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Հայաստանի բնակչության մեծամասնությունը նախընտրում է իրենց միջոցառումները կազմակերպել ամառային այս օրերին: Շատերը իրենց տոնական միջոցառումները իրականացնելու համար նախապես են ամրագրում ռեստորանները: Ինչպես երեկ գրել էինք՝ մեզ դիմած քաղաքացիները ասում են, որ ստիպված են եղել մի քանի ռեստորանի դիմել՝ իրենց առիթը կազմակերպելու համար, քանի որ շատ ռեստորաններում արդեն ազատ օր չի եղել:

Քաղաքացիներից մեկն ասաց, որ Չարենցավանի ռեստորաններից մեկում իրենց առիթը կազմակերպելու համար առաջարկել են սպասել մինչեւ սեպտեմբեր:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Գինաց» ռեստորանի փոխտնօրեն Վահան Պողոսյանն ասաց, որ իրենց մոտ ազատ տեղեր կան, բայց քիչ:

Նրա խոսքով՝ հուլիս եւ օգոստոս ամիսներին արդեն սրահները ամրագրված են՝ պայմանավորված սեզոնով:

«Բոլոր տեղերում 90% զբաղվածություն է լինում: Չաշխատող ռեստորան չի լինում հուլիս-օգոստոս ամիսներին»:

Փոխտնօրենի խոսքով՝ իրենց ռեստորանում անգամ սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամիսների համար կան ամրագրումներ:

Իսկ Խնձորենի ռեստորանի մենեջեր Մանվել Բազիրյանն ասաց, որ ամրագրումները այդքան էլ շատ չեն:

Ենթադրելի է, որ խրախճանքներն անպակաս են հասարակության կյանքից՝ կնունքներ, հարսանիքներ, ծնունդներ, գործնական հավաքույթներ, տարբեր մրցանակաբաշխություններ եւ ավարտական երեկոներ:

Ներկայացնենք նաեւ, թե ինչ արժեքների միջեւ են տատանվում ռեստորանների գները՝ մեկ անձի համար:

Դիլիջան - այստեղ կարելի է առանձնացնել «Գետափ» ռեստորանային եւ հյուրանոցային համալիրը: Մեկ անձի համար ռեստորանում աժեքը տատանվում է 14 հազարից 15 հազարի միջեւ:

Հաջորդը «Հովեր գարդենն» է, որտեղ մեկ անձի համար արժեքը սկսվում է 16 500 ՀՀ դրամից եւ տատանվում է մինչեւ 25 հազար դրամի սահմաններում:

Դիլիջանն ամփոփենք «Դիլիջազ» ռեստորանային եւ հյուրանոցային համալիրով: Այստեղ մեկ անձի համար արժեքը տատանվում է 21 500-ից մինչեւ 35 000 ՀՀ դրամի միջեւ:

Աշտարակ - «Վանա Լիճ» ռեզորթ, որտեղ մեկ անձի համար ռեստորանային արժեքը սկսվում է 18 000 դրամից:

«Օլդ Աշտարակ» ռեստորանում մեկ անձի համար կարող եք վճարել 17 500 դրամից սկսած:

«Վան Արդի» գինեգործարանի այգիներ: Մեկ անձի համար ռեստորանում արժեքը տատարվում է 18 000 դրամից մինչեւ 25 000 դրամի միջեւ:

«Նազանի». «Արմենիա Վայն» գինեգործարանի ռեստորանում հստակ մենյուներ չկան, սակայն մենյու սեթեր ընտրելուց հետո՝ վստահ եղեք, որ այն կլինի 18-ից 25 հազար դրամի սահմաններում՝ չափազանց լի եւ առատ:

«Թուֆենկյան» հյուրանոցներ, ռեստորաններ՝ Ավան-Զորագետում, Ծափաթաղում, Երեւանում եւ Դիլիջանում: այստեղ մեկ անձի համար կարելի է աթոռ ամրագրել 180 հազար դրամից սկսած:

Անդրադառնալով ավելի թանկ ռեստորաններին՝ կարելի է առանձնացնել «Պրայմ հոլլ»-ը եւ «Դվին» հյուրանոցը, որտեղ համապատասխանաբար՝ մեկ անձի համար պետք է վճարել 25 000 եւ 50 000 ՀՀ դրամից սկսած գումար:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,
ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԾՐՔԱՆՑԵԼ

Փրկարար ծառայությունը տեղեկացնում է, որ ՀՀ տարածքում կան փակ ավտոճանապարհներ:

Ըստ Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամի՝ Վանաձոր-Ալավերդի-Այրում-Բագրատաշեն ավտոճանապարհը երթեւեկելի է միայն մարդատար ավտոմեքենաների համար:

Վարորդներին հորդորվում է դեպի Վրաստանի սահման ուղեւորվելիս Մ-6-ը շրջանցել Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ սահման եւ Մ-1 Երեւան-Գյումրի-ՀՀ սահման միջպետական ավտոճանապարհներով:

Մ-4, Երեւան-Սեւան-Իջեւան-ՀՀ սահման ավտոճանապարհի Դիլիջանից մինչեւ Իջեւան հատվածը երթեւեկելի է: Որոշ տեղամասերում, սակայն, երթեւեկությունը միակողմանի է:

Խաչթառակ եւ Լուսահովիտ գյուղեր տանող կամուրջը երկկողմանի փակ է: Գործում է Իջեւան-Լուսահովիտ-Խաչթառակ այլընտրանքային ավտոճանապարհը (գրունտային):

Մ-6 ավտոճանապարհից Դսեղ գյուղ տանող ճանապարհահատվածը (կամրջի վերանորոգման պատճառով) փակ է, գործում է Եղեգնուտ-Դեբեդ-Դսեղ այլընտրանքային ավտոճանապարհը:

Վրաստանի ՆԳՆ ԱԻ դեպարտամենտից եւ ՌԴ ԱԻՆ Հյուսիսային Օսիայի ճգնաժամային կառավարման կենտրոնից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար:

Նշենք նաեւ, որ պարբերաբար հոսանքազրկվում են քաղաք Երեւանի շատ այլ հասցեներ, ինչը եւս դառնում է մեծ խնդիր:

Երեկ՝ ժամը 18:30-ի հատվածում (խմբ.) Աբովյան փողոցը հոսանքազրկված է եղել, ինչի պատճառով էլ չէին աշխատում փողոցներում տեղադրված լուսացույցերը, ինչն էլ իր հերթին ստեղծել էր խցանում:

Հիշեցնենք, որ հուլիսի 6-ին Երեւանհէկ-ում հրդեհ էր բռնկվել, որի պատճառով էլ մինչ օրս շարունակվում են հոսանքազրկումները:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՀԷՑ-ի մամուլի խոսնակ Նատալյա Սարջանյանի հետ, ով մեզ հետ զրույցում նշել է.

«Մենք հայտարարություն ենք տարածել այս մասին, վթար է տեղի ունեցել: Այս պահին չեմ կարող ասել, թե խնդիրը երբ է վերջնական լուծվելու, ամեն օր այդ ուղղությամբ աշխատում ենք: Երբ վերջնական կկարգավորվի, եւս հայտարարություն կտանք, որ վերջնականապես կարգավորված է»:

Նատալյա Սարջանյանը նաեւ նշեց, որ վթարի հետեւանքով է, որ պարբերաբար հոսանքազրկումներ են լինում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀՈՍԱՆՔԱԶՐԿՈՒՄՆԵՐ. ՀԷՑ-Ը ՉԳԻՏԻ՝ ԵՐԲ ԿԿԱՐԳԱՎՈՐՎԻ

Երեւանի փոքր կենտրոնում հոսանքազրկումները չեն դադարում, ինչպես պարբերաբար, այնպես էլ երկար ժամանակով:

Հանրապետության 61 հասցեում երեկվանից մինչեւ այսօր (խմբ.) հոսանքազրկված է, ինչի հետեւանքով էլ որոշ հաստատություններ չեն կարողանում իրականացնել իրենց աշխատանքները:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 17 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՈՐՈՇՈՒՄ

Կառավարությունն իր երեկվա՝ հուլիսի 11-ի նիստում, որոշեց 2024-ի բյուջեից ՀՀ մարզպետների աշխատակազմերին հատկացնել 2 մլրդ 229 մլն դրամ՝ սուբվենցիոն ծրագրերի շրջանակում համապատասխան շինարարական կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:

Հիմնավորման մեջ նշվում է, որ ՀՀ 2021, 2022, 2023 թվականներին հաստատված եւ իրականացման փուլում գտնվող մի շարք ծրագրերի աշխատանքների գծով համայնքների հետ կնքված սուբվենցիայի տրամադրման պայմանագրերի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչեւ 2024 թվականի նոյեմբերի 1-ը՝ եղանակային ոչ բարենպաստ պայմանների եւ կատարված աշխատանքների որակի պահպանման պատճառով:

ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը նշեց, որ այդ գումարը հատկացվում է 8 մարզերի 20 համայնքների թվով 26 սուբվենցիոն ծրագրեր ֆինանսավորելու համար:

«Ծրագրերից մեկը 2021 թվականի է, 7-ը՝ 2022-ի, 18-ը՝ 2023-ի համար: Արագածոտնի մարզի 2 ծրագրերի համար առաջարկվում է վճարել 292 մլն դրամ, Արարատի մարզում 5 ծրագրի համար՝529 մլն դրամ, Արմավիրում 6 ծրագրի համար՝ 373 մլն դրամ, Գեղարքունիքում 1 ծրագրի համար՝ 57 մլն դրամ, Լոռիում 5 ծրագրի համար՝ 488 մլն դրամ, Կոտայքում 2 ծրագրի համար՝187 մլն դրամ, Շիրակում 4 ծրագրի համար՝ 246 մլն դրամ եւ տավուշում 1 ծրագրի համար՝54 մլն դրամ:

Այս որոշումից հետո արդեն կառավարությունը մի շարք որոշումներով այս տարի 12 մլրդ 306 մլն դրամ հատկացրած կլինի սուբվենցիոն ծրագրերին»,-ասաց նա:

ՀՈՒՇԱԳԻՐ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ

Հայաստանի Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԱՏՁՄ) փոխըմբռնման հուշագիր ստորագրեց «Այ Սի Սի» հայաստանյան ազգային կոմիտեի (ICC NCA) հետ: Այս համագործակցությունը նպատակ ունի աջակցելու 2024 թվականի Նորարարության եւ Տեխնոլոգիաների Համաշխարհային Կոնգրեսի (WCIT2024/DigiTec) կազմակերպման աշխատանքներին եւ նպաստելու միջազգային մասնակցայնության բարձրացմանը:

Փոխըմբռնման հուշագիրը ստորագրեցին ԱՏՁՄ գործադիր տնօրեն Սարգիս Կարապետյանը եւ «Այ Սի Սի» հայաստանյան ազգային կոմիտեի Գլխավոր քարտուղար Ռաֆֆի Սեմերջյանը:

Հուշագրի շնորհիվ կմիավորվեն երկու կառույցների ջանքերը՝ միջազգային բիզնես եւ գործընկերային ցանցերը մեկտեղելու միջոցով՝ ի նպաստ WCIT2024/DigiTec-ի կազմակերպչական աշխատանքների:

WCIT/DigTec-ի մասին. Նորարարությունների եւ տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսը (WCIT) հեղինակավոր համաշխարհային միջոցառում է, որը կազմակերպվել է SS եւ ծառայությունների համաշխարհային դաշինքի (WITSA) կողմից:

ՁԱՐԳԱՑՈՒՄ

5 ՄԼՆ ԴՈԼԱՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանի հետ համատեղ հայտարարության ժամանակ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տնօրեն Սամանթա Փաուերը հայտարարել է՝ Amazon Web Service-ի եւ ՀՀ կառավարության միջեւ համագործակցությունը խթանելու եւ առաջ մղելու նպատակով 5 միլիոն ԱՄՆ դոլարի՝ նոր ֆինանսավորման մասին:

Սամանթա Փաուերը նշել է, որ ՀՀ կառավարությունը նվիրումով է մոտենում թվայնացմանը, տեխնոլոգիաներին, կիբեռանվտանգությանը՝ցանկանալով իրականություն դարձնել դրանց հետ կապված իրենց տեսլականը:

ՄԶԳ տնօրենն ընդգծել է, որ Amazon Web Service-ը Հայաստանին կօգնի արագորեն զարգացնել եւ թվայնացնել իր համակարգերը՝ տրամադրելով վերապատրաստման ծառայություններ ամպային հաշվարկների, կիբեռանվտանգության ոլորտներում՝ օգնելով Հայաստանին կառուցել իր ինքնիշխանությունը: Այդ նախաձեռնությունը միջազգային գործարար համայնքի կողմից կարող է ավելի շատ հետաքրքրություն բերել դեպի Հայաստան, որը կստեղծի նաեւ նոր աշխատատեղեր, կօգնի ընտանիքներին, որպեսզի ավելի մեծ գումարներ սկսեն վաստակել:

Փաուերի խոսքով՝ այս ամենն արվում է ճիշտ տեղում եւ ճիշտ ժամանակին՝ օգնելու Հայաստանին կառուցելու արդյունավետ եւ երկարատեւ ժողովրդավարություն, որը կծառայի հայ ժողովրդին:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը ՀՀ կառավարության անունից շնորհակալություն է հայտնել ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությանը եւ Ամերիկայի ժողովրդին՝ տարիներ շարունակ Հայաստանին ցուցաբերած աջակցության համար:

«Աշխարհում, որտեղ տեխնոլոգիաներն արագ փոխում են մեր ապրելակերպը, թվայնացումը դարձել է շարժիչ ուժ տնտեսությունն ու նորարարությունը խթանելու եւ կայուն զարգացում ապահովելու գործում», - ասել է Մխիթար Հայրապետյանը՝ հավելելով, որ թվային վերափոխման ճանապարհին Հայաստանը խորապես կարեւորում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ներդրումը հատկապես ծառայությունների օպտիմալացման, թվայնացման, կիբեռանվտանգության ուղղությամբ:

«Ծառայությունների օպտիմալացման ու քաղաքացիակենտրոն դարձնելու նպատակով մենք սկսել ենք կիրառել տարբեր արդի մեթոդաբանություններ եւ վերջինիս գործիքակազմերով ներկայումս բարելավում ենք «ապրանքների ներմուծման» եւ «բիզնեսի գրանցման ու իրավունքների պաշտպանության» եւ այլ ընթացակարգեր: Արդյունքում կունենանք ամբողջությամբ թվայնացված ծառայություններ, որոնք հասանելի կլինեն քաղաքացիների համար ծառայությունների մատուցման ազգային հարթակում:

Մեր համատեղ աշխատանքի նշանակալի ձեռքբերումը եղել է ծառայությունների մատուցման հարթակի բջջային տարբերակի նախատիպի մշակումը: Այս նորարարությունն ավելի է մոտեցնելու ծառայությունները մեր քաղաքացիներին՝ ապահովելով կենսական ծառայություններից ցանկացած ժամանակ ցանկացած վայրում օգտվելու հնարավորություն»:

Իր խոսքում Մխիթար Հայրապետյանն անդրադարձել է նաեւ վերջերս ՀՀ կառավարության կողմից ընդունված «Ամպային առաջինը» քաղաքականությանը, որով ամպային առաջադեմ ենթակառուցվածքների զարգացման համար իրավական հիմք է դրվել: Նախարարը վստահաբար նշել է, որ այս հարցում եւս Հայաստանը կհամագործակցի ամերիկյան գործընկերների հետ՝ ապահովելու պետական եւ մասնավոր հատվածում կարողությունների զարգացումը՝ ամպային տեխնոլոգիաներին անցնելու նպատակով:

Եզրափակելով խոսքը՝ Մխիթար Հայրապետյանն ընդգծել է Միացյալ Նահանգների հետ գործընկերության կարեւորությունը Հայաստանում տեխնոլոգիական նորարարությունների խթանման եւ կիբեռանվտանգության ապահովման գործում՝ ի շահ ավելի դիմակայուն եւ տեխնոլոգիապես զարգացած Հայաստանի:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի վարչական տարածքում «Բազենք» ՓԲԸ-ի՝ «Եղեգիս-1» փիէկի շահագործման նպատակով Եղեգիս գետից՝ միջինը 2460 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17-ից-18-00-ն դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի հուլիսի 16-ին՝

(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ժամը 16:00-ին, հասցե՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ԻՆՏԵՐՆԵՏ ԿԱՊՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է

«Տեղեկացնում ենք, որ Team Telecom Armenia-ի ինտերնետ կապը վերականգնվել է հանրապետության ողջ տարածքում»:

Նշենք, որ Տավուշի եւ Լոռու մարզում վնասվել էին ընկերության միջազգային կապուղիները, ինչը պատճառ էր դարձել ֆիքսված եւ բջջային ինտերնետի ծառայությունների հասանելիության սահմանափակման:

Կիրանցով անցնող կապուղին վնասվել էր շինարարական աշխատանքների ընթացքում, որից հետո գործարկվել էին Տաշիրով եւ Ալավերդիով անցնող պահուստային կապուղիները: 14:40-ին վթարվել էր Տաշիրով, իսկ 15:10-ին՝Ալավերդիով անցնող, համապատասխանաբար երկրորդ եւ երրորդ, պահուստային կապուղիները՝ շինարարական աշխատանքների պատճառով, ինչն էլ հանրապետության տարածքում ինտերնետի սահմանափակ հասանելիության պատճառ էր դարձել:

Հավելենք, որ Կիրանցում վթարը տեղի էր ունեցել ընկերության կողմից շրջանցիկ ճանապարհով անցնող նոր կապուղու պլանավորված գործարկումից անմիջապես առաջ: Ժամը 18:30-ից վերականգնվել է Տաշիրով, այնուհետեւ Կիրանցով անցնող կապուղին: Դեռեւս աշխատանքներ են իրականացվում Ալավերդիում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՂ ՖԻԼՄԸ

«Ես վրեժխնդիր կլինեմ աշխարհից սիրո միջոցով. Ս. Փարաջանով» ֆիլմի պրոդյուսերներից Անի Որսկանյանը հուլիսի 8-ին Փարաջանովի 100-ամյակի առթիվ Երեւանի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի շրջանակում տեղի ունեցած փակ ցուցադրության ժամանակ, անդրադառնալով ֆիլմի ստեղծման ճանապարհին՝ նշեց.



«Այս ֆիլմն իրականություն դարձավ մեր յուրահատուկ թիմի, նրանց յուրահատուկ աշխատանքի շնորհիվ, ինչպես նաեւ այն մարդկանց շնորհիվ, ովքեր միշտ ֆիլմի կողքին էին: Շնորհակալ ենք Հայաստանի ազգային կինոկենտրոնին, ԿԳՄՍ նախարարությանը, ինչպես նաեւ Սերգեյ Փարանջանովի անվան տուն-թանգարանի ամբողջ անձնակազմին: Այս բոլոր մարդկանց եւ թիմերի շնորհիվ ունենք նման վավերագրական ֆիլմ, որն էլ նվիրում ենք Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին»:

Ֆիլմը հայ-ֆրանսիական համատեղ արտադրություն է, որին մասնակցություն է ունեցել նաեւ Մեծ Բրիտանիան:

Նախքան ցուցադրությունը՝ շնորհակալական խոսքով հանդես եկավ նաեւ ֆիլմի հեղինակ, պրոդյուսեր եւ ռեժիսոր Ջառա Ջյանը: Նա հատուկ շնորհակալություն հայտնեց բոլոր 9 հերոսներին եւ ասաց, որ ֆիլմի 10-րդ հերոսը հենց Փարաջանովն է:

Տարբեր սերունդների մշակութային գործիչներ աշխարհի տարբեր ծայրերից՝ Հայաստան, Սերբիա, Ֆրանսիա, Իտալիա, ԱՄՆ, Լատվիա, Կանադա: Ընդհանուր գաղափարների, նպատակների եւ լուծումների որոնում՝ տարբեր բարիկադներում գտնվող հերոսներով, որոնց միավորում է Փարաջանովի նկատմամբ ունեցած սերը:

Ֆիլմում անցյալը հանդիպում է ներկային: Փարաջանովի կյանքի եւ ստեղծագործության միջոցով եւ հենց նրա հետ միասին կհետազոտվեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են մարդու ազատության թեման ոչ ազատ պայմաններում, ինչպես են փշալարերը եւ պատերազմները ազդում մշակույթի եւ մշակութային գործիչների վրա, որն է, գուցե միակ ճիշտ ընտրությունը տոքսիկ իրականության պայմաններում եւ այլն: Կյանքն ու ստեղծագործելը գոյություն ունեն՝ չնայած արգելքներին եւ բռնապետություններին:

Փարաջանովն աշխարհահռչակ էր. նա մինչ օրս նշաձող եւ օրինակ է: Մեծ է նաեւ այս ֆիլմի աշխարհագրությունը: Նկարահանումները տեղի են ունեցել Հայաստանում, Սերբիայում, Լատվիայում եւ Գերմանիայում, Սերբիայում՝ 2023-ի հունիսին, որտեղ նկարահանվել է հարցազրույց Էմիր Կուստուրիցայի հետ, Ռիգայում (Լատվիա)՝ 2023-ի օգոստոսին, որտեղ նկարահանվել են հարցազրույցներ Չուլպան Խամատովայի, Լորա Գուերայի հետ, Բեռլինում՝ 2024-ի փետրվարին, որտեղ նկարահանվել է հարցազրույց Ատոմ Էգոյանի հետ եւ Երեւանում՝ 2023-ի հուլիս-հոկտեմբեր եւ 2024-ի փետրվար ամսի ժամանակահատվածում, հարցազրույցներ՝ Արտավազդ Փելեշյանի, Ժոել Շապրոնի, Ալի Համրաեւի, Լեւոն Աբրահամյանի հետ: 2024-ի հունվարին, ֆիլմում նկարահանվելու նպատակով, հատուկ ճանապարհորդություն դեպի Երեւան կատարեց նաեւ Տարսեմ Սինգխը: Երեւանում է նկարահանվել նաեւ ֆիլմի խաղարկային մասը:

Հավելենք, որ փակ դիտման պատվավոր հյուրերն էին ռեժիսորներ Ատոմ Էգոյանը եւ Տարսեմ Սինգխը, ովքեր ֆիլմի հերոսներից են: Նրանք երկուսն էլ փաստում են, որ Փարաջանովն իրենց ստեղծագործական գործունեության վրա մեզ ազդեցություն է ունեցել՝ ոգեշնչման աղբյուր հանդիսանալով:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՊԱՆՈՒՄ

ՍՏՐԱԴԻՎԱՐԻՈՒՍԻ ԵՎ ԳՎԱՐՆԵՐԻԻ ՋՈՒԹԱԿՆԵՐԸ

Կապանի միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում Երեւանում էր աշխարհում ջութակի վաճառքով զբաղվող առաջատար ընկերություններից մեկի՝ համաշխարհային ճանաչում վայելող Florian Leonhard Fine Violins ընկերության ղեկավար Ֆլորիան Լեոնհարդը:

Նա Հայաստան է բերել եւ Կապանում ցուցադրել է իր հավաքածուից բացառիկ նմուշներ՝ Անտոնիո Ստրադիվարիուսի եւ Ջուզեպպե Գվարների դել Ջեզուի լեգենդար ջութակները: Սա առաջին համագործակցությունը չէ մեր երկրի հետ. հունիսին անցկացված Խաչատրյանի անվան 20-րդ միջազգային մրցույթի առաջին տեղը զբաղեցրած ջութակահարը թույլտվություն ստացավ մեկ տարի օգտագործել Ֆլորիան Լեոնհարդի, Fine Violin հավաքածուի բացառիկ ջութակներից մեկը:

Խոսելով Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի դափնեկրին շնորհված հատուկ մրցանակի մասին՝ Ֆլորիան Լեոնհարդն ընդգծում է՝ շատ կարեւոր է, որպեսզի խոշորագույն միջազգային ստուգատեսներին, որտեղ նաեւ համաշխարհային ճանաչում ունեցող անհատներ են ներկա, առանձնահատուկ շեշտվի առաջին մրցանակի նշանակությունը:

Ֆլորիան Լեոնհարդը լավագույն գործիքների եւ երաժիշտների հետ աշխատելու ավելի քան 40 տարվա փորձ ունի: Մեզ հետ զրույցում նա նշեց, որ Հայաստան գալով՝ նպատակ ուներ իր հնարավորությունների սահմաններում աջակցելու մեր երկրին: Նրա խոսքով՝ կա հայ տաղանդավոր երաժիշտների մի մեծ ցանկ, որոնք աշխարհում հայտնի անուններ են: Նրանցից շատերն ապրում են Հայաստանից դուրս, սակայն ինքը նպատակ ունի օգնելու տեղի երաժիշտներին, որպեսզի երաժշտության նորագույն միտումներին կարողանան ծանոթանալ հենց Հայաստանում եւ մնան իրենց հայրենիքում՝ գործունեություն ծավալելով հենց այնտեղ:

Ֆլորիան Լեոնհարդի հավաքածուի ջութակները մեկ շաբաթ ցուցադրվել են Կապանում: Ցուցադրությունն ունեցել է շուրջ 2 հազար 300 այցելու: Նա ուրախությամբ է շեշտում այն փաստը, որ Հայաստանի հեռավոր շրջանում ներկայացվում է դասական երաժշտությունը, եւ ինքն էլ հնարավորություն է ունեցել կրթելու նպատակ հետապնդող այդ գեղեցիկ նախաձեռնության մի մասնիկը լինել:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱՆ ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ Է

Անգլիայի հավաքականը 2:1 հաշվով հաղթել է Նիդեռլանդներին եւ դարձել Եվրո-2024-ի եզրափակիչ անցած երկրորդ հավաքականը:

Հանդիպման յոթերորդ րոպեին հաշիվը բացել է հոլանդացի Խավի Սիմոնսը: 18-րդ րոպեին Անգլիայի հավաքականի ավագ Հարի Քեյնը 11 մետրանոցից հավասարեցրել է հաշիվը: Վճռորոշ պահը եղել է երկրորդ խաղակեսի 90-րդ րոպեին, երբ հարձակվող Օլի Ուոթկինսը խփել է Անգլիայի հավաքականի հաղթական գնդակը:

Եվրոպայի առաջնության եզրափակիչը կկայանա կիրակի՝ հուլիսի 14-ին, Երեւանի ժամանակով 23:00-ին: Իսպանիան կփորձի նվաճել չորրորդ տիտղոսը, իսկ Անգլիան՝ իր պատմության մեջ առաջինը:

ՀԱՅՏՆԻ ԵՆ ԲՈԼՈՐ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ

Հուլիսի 10-ին կայացան Ուիմբլդոն 2024-ի տղամարդկանց մենախաղի մրցաշարի վերջին քառորդ եզրափակիչ հանդիպումները, որոնց արդյունքներով որոշվեցին կիսաեզրափակիչի զույգերը:

Դանիլ Մեդվեդեւ (Ռուսաստան) - Կարլոս Ալկարաս (Իսպանիա)

Նովակ Ջոկովիչ (Սերբիա) - Լորենցո Մուզետի (Իտալիա)

Միայն 22-ամյա Մուզետին երբեք չի խաղացել Ուիմբլդոնի կամ ընդհանրապես Մեծ սաղավարտի մրցաշարերի կիսաեզրափակիչ փուլում: Նովակ Ջոկովիչը, ում Լորենցոն կհանդիպի կիսաեզրափակչում, Ուիմբլդոնում ունի 7 տիտղոս:

ԴԵՇԱՄԸ ԿՄԱՐՔԻ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ

Ֆուտբոլի Ֆրանսիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Դիդյե Դեշամը կշարունակի աշխատանքը ազգային թիմում: Այդ մասին հայտնել է այդ երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ֆիլիպ Դիալոն.

«Որեւէ պատճառ չկա Դեշամի գործող պայմանագիրը կասկածի տակ դնելու համար: Նախորդ մրցաշարերի արդյունքները միայն փաստում են, որ Դեշամն ու թիմը հասել են իրենց առջեւ դրված նպատակներին: Դիդյեն կշարունակի մարզել Ֆրանսիայի հավաքականը»,- Դիալոյի խոսքերը մեջբերում է L'Equipe-ը:

55-ամյա Դեշամը Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ մինչեւ 2026 թ. հուլիսի 31-ը գործող պայմանագիր ունի: Նա հավաքականը մարզում է 2012 թ. հուլիսից: Անվանի ֆուտբոլիստի գլխավորությամբ ֆրանսիացիները 2018 թ. դարձել են աշխարհի չեմպիոն, 2022 թ.՝ փոխչեմպիոն, 2019 թ. հաղթել են Ազգերի լիգայի խաղարկությունում, իսկ 2016 թ. Եվրոպայի տնային առաջնությունում հասել են եզրափակիչ: Եվրո-2024-ում Ֆրանսիայի հավաքականը դուրս էր եկել կիսաեզրափակիչ, որտեղ 1-2 հաշվով պարտվեց Իսպանիայի ընտրանուն:

● *Հուլիսի 14-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ինչ տարբերություն, թե ում հետ» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որ ուսանողներին է կրթաթոշակ տրվում:

Գայանե Գասպարյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է, որը մրցութային կարգով տրվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողին՝ գերազանց եւ լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսեւորելու համար, ինչպես նաեւ սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին: Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներ են համարվում՝

1) մասնակցությունն ուսումնական հաստատության ուսանողական, հասարակական աշխատանքներին.

2) զեկուցումները, ռեֆերատները, հրատարակած աշխատանքները (գիտական ամսագրերում եւ զանգվածային լրատվության միջոցներում).

3) մասնակցությունը միջքոլեջային, քաղաքային, հանրապետական եւ միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին.

4) այլ ստեղծագործական նախաձեռնություններ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում պետական կրթաթոշակը տրվում է կրթաթոշակային նպաստի համակարգում ընդունված ուսանողին: Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում կրթաթոշակի հատկացման մասին որոշումն ընդունում է հիմնադիրը:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում ամուսնալուծությունը: Ուզում էի իմանալ, թե ինչ փաստաթղթեր են ներկայացվում ամուսնալուծության պետական գրանցման համար:

Հեղինե Կիրակոսյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ամուսինների միջեւ առկա է ամուսնալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնություն, ապա նրանց ամուսնալուծությունը կատարվում է ՔԿԱԳ մարմնում: Ամուսնալուծության գրանցման համար ամուսինները ՔԿԱԳ մարմին են ներկայացնում համատեղ դիմում: Ամուսնալուծության պետական գրանցման համար ներկայացվում է անձը հաստատող փաստաթուղթ, ամուսնության վկայական, ամուսինների համատեղ դիմումը՝ ՔԿԱԳ մարմնում ամուսինների միջեւ փոխադարձ համաձայնության առկայությամբ ամուսնալուծություն կատարելու համար, ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսը դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ կամ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով, ամուսինների դիմումը եւ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքում:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնալուծության գրանցումը եւ ամուսիններից յուրաքանչյուրին ամուսնալուծության վկայականներ տրամադրելը կատարվում է ՔԿԱԳ մարմնի կողմից ամուսնալուծության մասին ամուսինների դիմում տալու օրվանից առնվազն մեկ ամիս հետո, բայց երեք ամսից ոչ ուշ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ֆուտբոլի Կոնֆերենցիաների լիգայի որակավորման առաջին փուլում Երեւանի «Նոա»-ն հյուրընկալեց Հյուսիսային Մակեդոնիան ներկայացնող «Շկենդիա»-ին: Ակումբը հաղթանակով մեկնարկեց լիգայի որակավորման առաջին փուլը. խաղն ավարտվեց «Նոա»-«Շկենդիա»՝ 2:0 հաշվով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+7 +12 +25 +29		Արարատ	+19 +21 +34 +36
Կոտայքի լեռներ	+8 +10 +24 +27		Արմավիր	+18 +20 +34 +36
Կոտայքի նախալեռներ	+19 +21 +30 +33		Վայոց ձորի լեռներ	+8 +10 +24 +27
Գեղարքունիք	+7 +11 +24 +28		Վայոց ձորի նախալեռներ	+17 +19 +33 +35
Լոռի	+9 +14 +25 +28		Սյունիքի հովիտներ	+18 +21 +31 +34
Տավուշ	+14 +19 +29 +33		Սյունիքի նախալեռներ	+12 +16 +25 +28
Արագածոտնի լեռներ	+7 +9 +23 +27		ԼՂՀ	+12 +15 +24 +26
Արագածոտնի նախալեռներ	+16 +20 +29 +33		Երեւան	+22 +24 +32 +34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.7.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*